



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Քննաթերթ

	Թեմա	Միավոր
Հարցեր 1-25	Բազմակի ընտրության հարցեր	50
Խնդիր 1	Համախմբված ֆինանսական հաշվետվություն	18
Խնդիր 2	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	14
Խնդիր 3	Մշակման և հետազոտության ծախսումներ	9
Խնդիր 4	Պաշարներ	9
Ընդամենը		100

Հուլիս 2026թ.

Բաժին 1. Բազմակի ընտրության հարցեր

Բաժինը կազմված է 25 հարցերից: Բոլոր հարցերը պարտադիր են:

Յուրաքանչյուր հարցը 2 միավոր, Ընդամենը 50 միավոր:

1. Կազմակերպության հաշվետու տարվա զուտ շահույթը կազմում է 125,000 հազ. դրամ, նախորդ տարվա շահույթը 25,000 հազ. դրամ ավել էր: Հաշվետու տարվա վերջում բաժնետիրական կապիտալը կազմել է 2,000,000 հազ. դրամ, կարճաժամկետ վարկերը 35,000 հազ. դրամ, իսկ պահուստները՝ 500,000 հազ. դրամ:

Որքա՞ն կկազմի ներդրված կապիտալի եկամտաբերության գործակիցը

Ա) 5%

Բ) 20%

Գ) 62.5%

Դ) 16%

2. Ֆինանսական տարվա վերջում ընկերության ոչ ընթացիկ նյութական ակտիվների վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը՝

Հող և շինություններ՝ սկզբնական արժեք 10,400 հազ. դրամ

Հող և շինություններ՝ կուտակված մաշվածություն 120 հազ. դրամ

Ընկերությունը որոշել է առաջին անգամ վերագնահատել նշված ակտիվները, և վերագնահատված արժեքը կազմել է 15,000 հազ. դրամ:

Որքա՞ն կկազմի ոչ ընթացիկ ակտիվի վերագնահատումից աճը

Ա) 14,880

Բ) 4,720

Գ) 4,600

Դ) 15,120

3. Կազմակերպության փորձնական հաշվեկշիռը 31 դեկտեմբեր 2025թ. դրությամբ չի հաշվեկշռվում:

Դեբետային և կրեդիտային մնացորդների հանրագումարները կազմել են՝

Դեբետային՝ 5,102,000 հազ. դրամ

Կրեդիտային՝ 5,006,800 հազ. դրամ

Նշված սխալներից ո՞րի ուղղումը կարող է գրոյացնել այդ տարբերությունը:

Ա) Ապրանքների վաճառքի նպատակով գնորդից ստացված կանխավճարը 47,600 հազ. դրամ դեբետագրվել է տրամադրված կանխավճարների հաշվին:

Բ) 95,200 հազ. դրամ արժողությամբ ավտոմեքենայի ձեռքբերման գործարքը չի արտացոլվել փորձնական հաշվեկշռում:

Գ) 23,800 հազ. դրամ տրամադրված զեղչը դրա գծով ծախսի հաշվին դեբետագրվելու փոխարեն կրեդիտագրվել է ստացված զեղչերի գծով եկամտի հաշվին:

Դ) 47,600 հազ. դրամ ապահովագրական ծախսերի հաշվի դեբետային մնացորդը բաց է թողնվել փորձնական հաշվեկշռից:

4. Կազմակերպությունը պատրաստվում է թողարկել արտոնյալ բաժնետոմսեր և դրանք տեղաբաշխել անվանական արժեքով:

Եթե դա նրան հաջողվի, նշված ո՞ր փոփոխություններն են հնարավոր:

1. Կաճի կանոնադրական կապիտալը
2. Չի աճի կանոնադրական կապիտալը
3. Կաճի դրամական միջոցների չափը
4. Կաճի էմիսիոն եկամտի չափը
5. Կաճի վերագնահատման պահուստը

Ա) 1 և 3

Բ) 5 և 2

Գ) 4 և 3

Դ) 1 և 4

5. Շրջանառության տեղեկագրում կրեդիտային մնացորդ կարող են ունենալ՝

- 1) ակտիվը կամ ծախսը
- 2) պարտավորությունը կամ ծախսը
- 3) կանոնադիր կապիտալը կամ կուտակված վնասը
- 4) պարտավորությունը կամ հասույթը

Ա) 1, 2, 4

Բ) 2 և 3

Գ) 4

Դ) 1, 3 և 4

6. Ինչպե՞ս պետք է Աստղիացված կազմակերպությունը հաշվառվի շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում:

- Ա) Աստղիացված կազմակերպության եկամուտներն ու ծախսերը տող առ տող ավելացվում են խմբի եկամուտներին:
- Բ) Աստղիացված կազմակերպության եկամտի և ծախսերի մեջ խմբի բաժինը տող առ տող ավելացվում է խմբի ցուցանիշներին:
- Գ) Աստղիացված կազմակերպության հարկումից հետո շահույթի խմբին հասանելի բաժինը որպես առանձին տող է ներկայացվում:
- Դ) Միայն Աստղիացված կազմակերպությունից ստացված շահաբաժիններն են գրանցվում շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում

7. ՀՀՄՍ 8 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ ստանդարտի ճշգրտումների հաշվառման նշված կանոններից ո՞րն է ճիշտ.

- Ա) Հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունները պետք է կիրառվեն առաջընթաց;
- Բ) Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ընտրելիս պետք է առաջնորդվել միայն ՀՀՄՍ 8 սահմանումներով:
- Գ) Նախորդ ժամանակաշրջանների էական սխալները ուղղվում են հետընթաց, իսկ ոչ էական սխալները չեն ուղղվում;
- Դ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները միշտ պետք է կիրառվեն հետընթաց;

8. ՀՀՄՍ 23 Փոխառության ծախսումներ ստանդարտի համաձայն նշվածներից ո՞րն է ճիշտ.

Ա) Որակավորվող ակտիվի կառուցման կամ ձեռքբերման նպատակով միայն ուղղակի ներգրավված փոխառության ծախսումներն են ենթակա կապիտալացման;

Բ) Փոխառության ծախսումների կապիտալացումը սկսելու համար պարտադիր է որ ձեռնարկվեն այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար;

Գ) Փոխառության ծախսումների կապիտալացումը կասեցվում է, երբ ակտիվի վրա կատարվող աշխատանքները ընդհատվում են տվյալ ժամանակաշրջանի համար սովորական համարվող բնակլիմայական պատճառներով;

Դ) Որակավորվող ակտիվը պետք է լինի նյութական:

9. Եթե իրացումից համախառն եկամուտը կազմում է 42,000 հազ. դրամ, այլ եկամուտները՝ 5,000 հազ. դրամ, ծախսերը՝ 35,000 հազ. դրամ, դրամական միջոցները՝ 25,000 հազ. դրամ, ապա որքա՞ն կկազմի գուտ շահույթը

Ա) 1,200

Բ) 2,000

Գ) 12,000

Դ) 37,000

10. 2023թ. հունվարի 1-ին ձեռք է բերվել հիմնական միջոց 50,000 հազ. դրամ արժեքով, մաշվածությունը հաշվարկվել է նվազող մնացորդի մեթոդով 30% դրույքաչափով:

Որքա՞ն կկազմի հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը 2025թ. տարվա վերջում

Ա) 24,500

Բ) 25,500

Գ) 5,000

Դ) 17,150

11. Ընկերության ընթացիկ ակտիվները նախորդ տարում կազմել են 400,000 հազ. դրամ, հաշվետու տարում կազմում են 500,000 հազ. դրամ և ակտիվները ընդամենը՝ 1,500,000 հազ. դրամ: Ընթացիկ պարտավորությունները՝ նախորդ տարում կազմել են 200,000 հազ. դրամ, հաշվետու տարում 300,000 հազ. դրամ և պարտավորությունները հաշվետու տարում կազմել են ընդամենը՝ 800,000 հազ. դրամ, նախորդ տարվա համեմատ աճելով 100,000 հազ. դրամով:

Ո՞րքան կկազմի սեփական կապիտալը հաշվետու տարվա վերջում

Ա) 200,000 դրամ

Բ) 300,000 դրամ

Գ) 700,000 դրամ

Դ) 1,200,000 դրամ

12. Անտոդակի մեթոդով կազմված դրամական հոսքերի մասին հաշվետվությունում գործառնական գործունեությունից դրամական հոսքերը ստանալու համար ստորև ներկայացվածներից որո՞նք են ճիշտ

1 Կրեդիտորական պարտքի նվազումը պետք է հանվի

- 2 Տոկոսային ծախսը պետք է հանվի
- 3 Դեբիտորական պարտքի նվազումը պետք է հանվի
- 4 Մաշվածությունը պետք է գումարվի

- Ա) 1, 2
- Բ) 2, 3
- Գ) 1, 4
- Դ) 2, 4

13. Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր 31-ի դրությամբ, որոնք տնօրենների խորհրդի կողմից վավերացվում են հաջորդ տարվա հունվարի 20-ին և հրապարակվում են փետրվարի 20-ին:

Ստորև նշվածներից ո՞րն է հանդիսանում հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպք

- Ա) հունվարի 10-ին հայտարարվել է հասարակ բաժնետոմսերի գծով շահաբաժին
- Բ) հունվարի 15-ին 17,000 հազ, դրամ ինքնարժեքով պաշարները վաճառվել են 10,200 հազ, դրամով
- Գ) հունվարի 25-ին պարտքեր ունեցող գնորդներից մեկը սնանկ է ճանաչվել
- Դ) փետրվարի 1-ին թողարկվել են մեծ քանակությամբ բաժնետոմսեր

14. **Ստորև բերված դրույթներից ո՞րն է ճշգրիտ արտացոլում կազմակերպության տարվա զուտ շահույթը**

- Ա) Զուտ ակտիվների տարեվերջի մնացորդ, գումարած նվազեցումներ, հանած ներդրված կապիտալ, հանած զուտ ակտիվների տարեսկզբի մնացորդ,
- Բ) Զուտ ակտիվների տարեվերջի մնացորդ, գումարած նվազեցումներ, հանած ներդրված կապիտալ, գումարած զուտ ակտիվների տարեսկզբի մնացորդ,
- Գ) Զուտ ակտիվների տարեվերջի մնացորդ, հանած նվազեցումներ, հանած ներդրված կապիտալ, հանած զուտ ակտիվների տարեսկզբի մնացորդ,
- Դ) Զուտ ակտիվների տարեվերջի մնացորդ, գումարած նվազեցումներ, գումարած ներդրված կապիտալ, հանած զուտ ակտիվների տարեսկզբի մնացորդ:

15. **Ինչպիսի՞ փոփոխություններ տեղի կունենան ընկերության հաշիվներում, եթե այդ ընկերությունը հասարակ բաժնետոմսեր թողարկի առաջնային շուկայում և տեղաբաշխի:**

- 1. Կաճի կանոնադրական կապիտալը
- 2. Կաճի դրամական միջոցների չափը
- 3. Կնվազի էմիսիոն եկամուտը դրամական միջոցների աճի չափով
- 4. Կաճի վերագնահատման պահուստը ավելացնելով դրամական միջոցները

Ա) 1 և 3

Բ) 1 և 2

Գ) 4 և 3

Դ) 1 և 4

16. Ընկերությունը պատրաստում է 2025թ. դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունը: Առկա է հետևյալ տեղեկատվությունը՝

1 Փոխառությունների տարեկան ծախսեր՝ 320 մլն. դրամ

2 Ներդրումներից եկամուտների գումարների ստացում՝ 1,250 մլն. դրամ

3 Շահութահարկի ծախսը հաշվետու տարվա համար՝ 395 մլն. դրամ

4 Հիմնական միջոցի իրացումից վնաս՝ 280 մլն. դրամ

5 Հիմնական միջոցի իրացումից հասույթ՝ 1,680 մլն. դրամ

6 Վճարված շահաբաժիններ՝ 550 մլն. Դրամ

Որքա՞ն է կազմում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերի գումարը

Ա) 2,330

Բ) 2,070

Գ) 1,410

Դ) 2,930

17. Ստորև նշվածներից որո՞նք են հանդիսանում սեփական կապիտալի հաշվետվության հոդվածներ

1 Էմիսիոն եկամտի սկզբնական մնացորդ

2 Հաշվետու ամսաթվից հետո հայտարարված շահաբաժին

3 Հաշվետու տարվա շահույթ հարկումից հետո

4 Ոչ ընթացիկ ակտիվի վերագնահատումից արժեքի աճ

Ա) 1,2,3

Բ) 1,2,4

Գ) 1,3,4

Դ) 2,3,4

18. Ի՞նչ ազդեցություն է ունենում պատմական արժեքի սկզբունքը գների անկման ժամանակաշրջանում

Ա) Գերազնահատվում են ակտիվները և շահույթը

Բ) Թերազնահատվում են ակտիվները և գերազնահատվում է շահույթը

Գ) Գերազնահատվում են ակտիվները և թերազնահատվում է շահույթը

Դ) Թերազնահատվում են ակտիվները և շահույթը

19. Ընկերությունը բանկից ստացել է վարկ՝ 250,000 հազ. դրամ և երկու տարի լրիվ միանվագ մարման ժամկետով:

Ստորև ներկայացված հաշվապահական գրանցումներից ո՞րն է արտացոլում կատարված գործառնությունը

Ա) Դեբետ – Ընթացիկ ակտիվներ – 250,000 հազ. դրամ

Կրեդիտ – Ընթացիկ պարտավորություններ – 250,000 հազ. դրամ

Բ) Դեբետ – Ոչ ընթացիկ ակտիվներ – 250,000 հազ. դրամ

Կրեդիտ – Ընթացիկ պարտավորություններ – 250,000 հազ. դրամ

Գ) Դեբետ – Ընթացիկ ակտիվներ – 250,000 հազ. դրամ

Կրեդիտ – Ոչ ընթացիկ պարտավորություններ – 250,000 հազ. դրամ

Դ) Դեբետ – Ոչ ընթացիկ ակտիվներ – 250,000 հազ. դրամ

Կրեդիտ – Ոչ ընթացիկ պարտավորություններ – 250,000 հազ. դրամ

20. ՀՀՄՄ 8 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ ստանդարտի համաձայն՝ թվարկվածներից ո՞րն է սխալ՝

Ա) Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը պետք է ճանաչվի հետընթաց կամ առաջընթաց՝ կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն

Բ) Երբ որևէ ՖՀՄՍ կոնկրետ կիրառվում է որևէ գործառնության, այլ դեպքի կամ իրադարձության նկատմամբ, այդ հոդվածի նկատմամբ կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է ընտրվի՝ կիրառելով այդ ՖՀՄՍ-ն:

Գ) Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում:

Դ) Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունները ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտումն է, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից

21. Ո՞ր սահմանումն է բնորոշում ասոցիացված կազմակերպությանը՝

Ա. Ասոցիացված կազմակերպությունները համախմբվում են խմբի ֆինանսական հաշվետվություններում

Բ. Ասոցիացված կազմակերպությունը կազմակերպություն է, որի նկատմամբ մայր կազմակերպությունը ունի հսկողություն

Գ. Ասոցիացված կազմակերպությունը կազմակերպություն է, որի բաժնեմասը ցույց է տալիս մայր կազմակերպության հսկողության տակ գտնվող ակտիվների և պարտավորությունների գումարը, որոնք սակայն չեն պատկանում մայր կազմակերպության հիմնադիրներին

Դ. Ասոցիացված կազմակերպությունը կազմակերպություն է, որի նկատմամբ ներդրողն ունի նշանակալի ազդեցություն

Ա) Ա և Բ

Բ) Բ և Դ

Գ) Գ և Դ

Դ) Դ

22. Ստորև ներկայացրածներից որո՞նք են համապատասխանում ՀՀՄՍ-ների և ՖՀՄՍ-ների դրույթներին՝

Ա. Պաշարների ինքնարժեքի մեջ ներառվում են գերնորմատիվային ծախսեր՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերաճախսի հետ:

Բ. Տարբեր աշխարհագրական տարածքներում պաշարների գտնվելը բավարար չէ ինքնարժեքի տարբեր բանաձևերի կիրառման համար:

Գ. Դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Դ. Կազմակերպությունը հիմնական միջոցի գծով սկզբնապես ճանաչված գումարը բաշխում է ըստ դրա նշանակալի մասերի և այդ յուրաքանչյուր մասի համար մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Ե. Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են՝ որոնք -առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, -ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ ժամանակաշրջանի ընթացքում:

Ա) Ա,Գ,Դ,Ե

Բ) Բ,Գ,Դ,Ե

Գ) Գ,Դ,Ե

Դ) Բոլորն էլ ճիշտ են

23. Կազմակերպությունը տնօրինում է գույք, որը ձեռք է բերվել 400 մլն դրամ արժեքով: Գույքը վերջին անգամ վերագնահատվել է 600 մլն դրամ: Վերագնահատումից աճը ճանաչվել է այլ համապարփակ արդյունքի կազմում: Հաշվետու ամսաթվի դրությամբ գույքի հաշվեկշռային արժեքը գնահատվում է 560 մլն դրամ: Անկախ վերագնահատողի կողմից գույքի փոխհատուցվող գումարը գնահատվել է 180 մլն դրամ:

Որքան կնվազեցվի գույքի հաշվեկշռային արժեքը:

Ա) 180 մլն դրամ

Բ) 260 մլն դրամ

Գ) 380 մլն դրամ

Դ) 560 մլն դրամ

24. Հետևյալ տվյալները վերաբերում են 2025թ.-ի դեկտեմբերի 31 -ին ավարտվող տարվան: Ընկերությունը իրացումից անուղղակի հարկերի հաշվարկ չի իրականացնում:

Պաշարների սկզբնական մնացորդը առ 01.01.25թ՝ 18,5 մլն դրամ

Պաշարների վերջնական մնացորդը՝ առ 31.12.25թ՝ 26 մլն դրամ

Իրացումից հասույթը 2025թ՝ 327,75 մլն դրամ

Պաշարները վաճառվել են 15% հավելագնով:

Որքա՞ն է կազմել 2025թ. ընթացքում ձեռք բերված պաշարների արժեքը:

Ա) 292,5

Բ) 286,1

Գ) 266,0

Դ) 274,0

25. Համաձայն ՀՀՄՍ 1– ի, որ հաշվետվություններն է անհրաժեշտ կազմել հաշվեգրման սկզբունքով՝

Ա. Կազմակերպության բոլոր ֆինանսական հաշվետվությունները

Բ Կազմակերպության եկամտային հարկի հաշվարկը

Գ. Կազմակերպության դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը

Դ Կազմակերպության բոլոր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության:

Ա) Ա,Բ

Բ) Բ,Գ

Գ) Գ

Դ) Դ

Խնդիր 1 Համախմբված ֆինանսական հաշվետվություն ՀՀՄՄ 10

«Ֆրեշ» ՓԲԸ-ն 2020թ-ից ի վեր զովացուցիչ ընպելիքներ արտադրող և իրացնող կազմակերպություն է:

Որոշվել է 2025թ-ից տեսականիում ավելացնել նաև տարբեր տեսակի սուրճեր: Այդ նպատակով 2025թ. հունվարի 1-ին «Ֆրեշ» ՓԲԸ ձեռք է բերել «Սուրճ» ՓԲԸ-ի զուտ ակտիվների 80 տոկոսը:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու տարվա համար պետք է կազմել և ներկայացնել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն:

Տրված են երկու ընկերությունների առանձին ֆինանսական հաշվետվությունները:

«Ֆրեշ» ՓԲԸ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	31.12.25թ. հազար դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	75,810
Ներդրում դուստր	
կազմակերպությունում	53,280
	<u>129,090</u>
Ընթացիկ ակտիվներ	
Պաշարներ	29,800
Դեբիտորական պարտքեր	32,870
Դրամական միջոցներ	<u>39,636</u>
	<u>102,306</u>
Ընդամենը ակտիվներ	<u>231,396</u>

**Սեփական կապիտալ եվ
պարտավորություններ**

Կանոնադրական կապիտալ Էմիսիոն եկամուտ / բաժնետոմսերի իրական ու անվանական արժեքների տարբերություն/	60,000
	24,400
Զբաղիված շահույթ	87,150
	<u>171,550</u>

**Ոչ ընթացիկ
պարտավորություններ**

Վարկեր	22,996
	<u>22,996</u>

**Ընթացիկ
պարտավորություններ**

Կրեդիտորական պարտքեր Շահութահարկի գծով պարտավորություն	35,270
	1,580
	<u>36,850</u>

**Ընդամենը սեփական
կապիտալ եվ
պարտավորություններ**

231,396

«Սուրճ» ՓԲԸ
ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	31.12.25թ. հազար դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	9,890
	<u>9,890</u>
Ընթացիկ ակտիվներ	
Պաշարներ	31,000
Դեբիտորական պարտքեր	20,700
Դրամական միջոցներ	27,300
	<u>79,000</u>
Ընդամենը ակտիվներ	<u>88,890</u>
Սեփական կապիտալ եվ պարտավորություններ	
Կանոնադրական կապիտալ	18,000
Էմիսիոն եկամուտ / բաժնետոմսերի իրական ու անվանական արժեքների տարբերություն/ Չբաշխված շահույթ	10,300
	<u>22,830</u>
	<u>51,130</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ	<u>-</u>
Ընթացիկ պարտավորություններ	
Կրեդիտորական պարտքեր	27,700
Շահութահարկի գծով պարտավորություն	10,060
	<u>37,760</u>
Ընդամենը սեփական կապիտալ եվ պարտավորություններ	<u>88,890</u>

Առկա է նաև հետևյալ տեղեկատվությունը.

- «Ֆրեշ» ՓԲԸ-ի կողմից «Սուրճ» ՓԲԸ-ի գուտ ակտիվների 80 տոկոսը ձեռքբերելու ամսաթվի դրությամբ 01.01.2025թ.-ին՝
 - «Սուրճ» ՓԲԸ-ի չբաշխված շահույթը կազմել է 13,200 հազ. դրամ,
 - «Ֆրեշ» ՓԲԸ-ի կողմից «Սուրճ» ՓԲԸ-ում ներդրված գումարը կատարվել է փոխհատուցման իրական արժեքին լրիվ համարժեք չափով,
 - չվերահսկվող բաժնեմասը հաշվարկվում է իրական արժեքի մոթոդով, և չվերահսկվող բաժնեմասի (20 տոկոս) իրական արժեքը կազմել է 9,800 հազ. դրամ:
- Հաշվետու ամսաթվի դրությամբ՝ 31.12.2025թ.
 - երկու ընկերությունների միջև կնքվել է փոխադարձ պարտավորությունների մասին ակտ, ըստ որի «Սուրճ» ՓԲԸ-ը ունի չմարված պարտավորություն "Ֆրեշ" ՓԲԸ-ի հանդեպ կառավարման խորհրդատվության համար, որը կազմում է 6,700 հազ. դրամ:
 - բացի դրանից, «Սուրճ» ՓԲԸ 2025թ. ընթացքում «Ֆրեշ» ՓԲԸ-ին ինքնարժեքով ապառիկ վաճառել է ապրանք 9,250 հազ դրամով, որի համար վճարվել է միայն 60%, իսկ մնացածը վճարվելու է հաջորդ հաշվետու տարվա ընթացքում: Այդ ապրանքը «Ֆրեշ» ՓԲԸ կողմից ամբողջությամբ սպառվել է:
- Ընկերությունների կանոնադրական կապիտալներում և էմիսիոն եկամուտներում հաշվետու տարվա ընթացքում փոփոխություն չի եղել:

Պահանջվում է՝

Կազմել 31.12.2025թ. դրությամբ Խմբի համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը և պատրաստել համախմբման համար անհրաժեշտ հաշվարկներով համապատասխան ծանոթագրությունները:

(18 միավոր)

Խնդիր 2: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ՀՀՄՄ 7, գործակիցներ

Տրված են «Արև-Լուսին» ՍՊԸ հետևյալ հաշվետվությունները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ 31 Դեկտեմբեր 2025 դրությամբ

հազ. դրամ

Ակտիվներ	31.12.2025	31.12.2024
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	24,280	26,010
Ոչ նյութական ակտիվներ	3,050	3,285
Ներդրումային գույք	14,000	14,650
	41,330	43,945
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	4,300	1,900
Դեբիտորական պարտքեր	7,090	5,805
Դրամական միջոցներ	6,580	750
	17,970	8,455
Ընդհանուր ակտիվներ	59,300	52,400
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կանոնադրական կապիտալ (1000 դրամ յուր. բաժնետոմսի արժեքը)	37,000	30,000
Բաժնետոմսի հավելագին	4,500	4,500
Կուտակված շահույթ	9,800	8,700
	51,300	43,200
Ոչ ընթացիկ պարտավորություններ		

Վարկ	3,000	3,000
	3,000	3,000
Ընթացիկ պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	3,800	4,100
Շահութահարկի գծով պարտավորություն	1,100	2,050
Հաշվեգրած ֆինանսական ծախսեր	100	50
	5,000	6,200
	59,300	52,400

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ 31 Դեկտեմբեր 2025 վերջացող տարվա համար
հազ. դրամ

Հասույթ	31,900
Վաճառքի ինքնարժեք, այդ թվում՝	-18,300
Հիմնական միջոցների մաշվածություն	-1,730
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	-235
Համախառն հասույթ	13,600
Իրացման ծախսեր	-2,220
Գործառնական ծախսեր	-4,080
Այլ եկամուտներ	20
Ֆինանսական ծախսեր: վարկ	-500
Ներդրումային գույք: ստացված վարձավճար	300
Ներդրումային գույք: իրական արժեքի փոփոխություն	-650
Շահույթ մինչև հարկումը	6,470
Շահութահարկ	-1,300
Շահույթ	5,170

Այլ համապարփակ արդյունք	0
Ընդհանուր համապարփակ արդյունք	5,170

Հայտնի է նաև հետևյալ՝

1. 2025թ. կազմակերպությունը թողարկել և անվանական արժեքով լրիվ տեղաբաշխել է 7000 հատ սովորական բաժնետոմս:
2. 2025թ. կազմակերպությունը իր սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վճարել է շահաբաժին:
3. Ընկերության հաշվային քաղաքականությամբ սահմանված է, որ փոխառությունների գծով տոկոսների վճարումները ներկայացված են գործառնական գործունեությունից դրամական հոսքերում, իսկ վարձակալության տրված ներդրումային գույքի դիմաց ստացված վճարումները՝ ներդրումային գործունեությունից դրամական հոսքերում:

Պահանջվում է՝

ա) Պատրաստել 31.12.2025 դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը՝ անուղղակի մեթոդով:

(8 միավոր)

բ) նկարագրել Դրամական հոսքերի մասին հաշվետվության մեջ հոսքերի դասակարգման տեսակները ըստ ՀՀՄՍ 7 ստանդարտի և հաշվետվության պատրաստման մեթոդները

(3 միավոր)

գ) տրված հաշվետվության ցուցանիշներով հաշվարկել «Արև-Լուսին» ՍՊԸ պաշարների շրջապտույտի, դեբիտորական պարտքերի հավաքման և կրեդիտորական պարտքերի վճարման գործակիցները 2025թ. համար

(3 միավոր)

Ընդամենը 14 միավոր

Խնդիր 3. Մշակման և հետազոտության ծախսումներ ՀՀՄՍ 38

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու տարվա վերջի դրությամբ “Նախագիծ” ԲԲ ընկերության հաշվապահական գրանցամատյաններում հաշվառվում են ընկերության կողմից իրականացվող երեք խոշոր հետազոտության և մշակման ծրագրերի (Ծրագիր Ա, Ծրագիր Բ և Ծրագիր Գ) հաշվապահական մնացորդներ:

Այդ մնացորդները հետևյալներն են՝

Տարեսկզբին՝ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ՝ հաշվապահական գրանցումներում կապիտալացված մշակման ծախսումները կազմում են 370 000 մլն. դրամ, ինչը բաղկացած է հետևյալից.

Ծրագիր Ա 250 000 մլն. դրամ

Ծրագիր Բ 80 000 մլն. դրամ

Ընդ որում Ա ծրագիրն ավարտվել է դեռևս 2023թ.դրությամբ՝ 300 000 մլն. դրամ արժեքով, և սկսած 2023թ. հունվարի 1-ից այն ամորտիզացվում է 12 տարվա ընթացքում՝ գծային եղանակով:

Բ ծրագիրը սկսել է 2022թ.-ին և 80 000 մլն. դրամը իրենից ներկայացնում է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալացման չափանիշներին բավարարող գումար: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2027թ.-ին:

Տարեսվերջի դրությամբ հայտնի է, որ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում կատարվել են լրացուցիչ հետևյալ ծախսումները.

Ծրագիր Բ -ի գծով կապիտալացման բավարարող լրացուցիչ ծախսումներ 36 000 մլն. դրամ

Ծրագիր Գ -ի գծով, որը նոր է, և նվիրված է նորագույն արտադրատեսակների համար նոր բարելավված նյութերի հետազոտական ուսումնասիրություն 18 000 մլն. դրամ

Պահանջվում է.

(ա) Հաշվարկել հետազոտության և մշակման այն գումարները, որոնք պետք է ընդգրկվեն ընկերության 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար՝

- Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

- Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

(3 միավոր)

(բ) Ներկայացնել և քննարկել հետազոտության և մշակման ծախսումների սահմանումները և մոտեցումները ըստ համապատասխան ստանդարտների, բերել օրինակներ

(3 միավոր)

(գ) Ներկայացնել մշակումից (կամ ներքին նախագծի մշակման փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվի ճանաչման չափանիշները ՀՀՄՍ 38-ին համապատասխան

(3 միավոր)

(Ընդամենը 9 միավոր)

Խնդիր 4. Պաշարներ ՀՀՄՍ 2

2025թ. հունվարի 1-ի դրությամբ «Ագրո Լոջիստիկ» ՍՊ ընկերության պահեստում առկա է 265 տոննա պարարտանյութի արտադրանք, որի մեկ տոննայի արժեքը կազմում է 20,150 դրամ:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել են պաշարներ շարժի հետևյալ գործարքները.

Գործարք	Գործարքի ամսաթիվ	Չափի միավորը /տոննա/	Միավոր արժեք /դրամ/
Մուտքեր	05 հունվար 2025	210	19,350
	12 օգոստոսի 2025	325	20,950
Ելքեր	14 մարտ 2025	375	24,150
	24 դեկտեմբեր 2025	110	25,750

Պահանջվում է՝

Հաշվարկել պարարտանյութի արտադրանքի մնացորդների արժեքը ընկերության կողմից 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու տարվա համար ներկայացվող ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ.

ա/ եթե հաշվային քաղաքականությամբ ընդունված է Առաջին մուտք, առաջին ելք (FIFO) մեթոդը.

(2 միավոր)

բ/ եթե հաշվային քաղաքականությամբ ընդունված է միջին կշռված արժեքի (AVCO) մեթոդը.

(3 միավոր)

գ/ ներկայացնել Պաշարների ինքնարժեքի չափման բանաձևերը ՀՀՄՍ 2-ին համապատասխան, ինչպես նաև նկարագրել դրանց կիրառության նպատակահարմարությունը:

(1,5 միավոր)

դ/ նկարագրել ա) և բ) կետերում պահանջվող մեթոդների վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները:

(2,5 միավոր)

(Ընդամենը 9 միավոր)